Թեմա՝ Սալբուտամոլ (ցողացիր շնչառման դեղաչափված) **դեղի դեղաչափերի հաշվիչ չունեցող ինհալատորում առկա դեղաչափերի քանակի վերաբերյալ**

Առողջապահության ոլորտի հարգելի մասնագետ,

Այս նամակի նպատակն է տրամադրել տեղեկություն դեղաչափերի հաշվիչ չունեցող Սալբուտամոլ դեղաչափված, աերոզոլային ինհալատորում առկա դեղաչափերի քանակի լրացուցիչ հսկման մեթոդների վերաբերյալ:

Հիմնական դրույթներ

- Ինհալատորը պարունակում է միայն 200 շնչառման համար բավարար սալբուտամոլի քանակ: 200 շնչառումից հետո ինհալատորը կարող է շարունակել ցողաշիթ արձակել, սակայն արդեն առանց սալբուտամոլի համապատասխան դեղաչափի պարունակության:
- Ինհալատորների թափահարման, կշռման կամ ջրի մեջ ընկղման մեթոդները թույլ չեն տալիս ճշգրիտ որոշել սալբուտամոլ ակտիվ բաղադրատարրի՝ ինհալատորում մնացած դեղաչափերի քանակը:
- Հետևաբար, անհրաժեշտ է պացիենտին խորհուրդ տալ դատարկ ինհալատորի պատահական օգտագործումից խուսափելու համար մանրակրկիտ հաշվառել օգտագործված դեղաչափերի քանակը:
- Նպատակահարմար է, որ պացիենտներն ունենան հավելյալ ինհալատոր: Եթե պացիենտն օգտագործում է մի քանի ինհալատոր, խորհուրդ է տրվում յուրաքանչյուր ինհալատորի շնչառված դեղաչափերի քանակը հսկել առանձին-առանձին:

Առողջապահության ոլորտի մասնագետներին առաջադրվող գործողություններ

Առողջապահության մասնագետները պետք է այս տեղեկատվությունը փոխանցեն պացիենտներին:

Կասկածելի կողմնակի ազդեցությունների վերաբերյալ հաղորդում

Սալբուտամոլ (ցողացիր շնչառման դեղաչափված) դեղի կողմնակի ազդեցությունների և անվտանգության վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն պետք է ուղղակիորեն հաղորդել ԳՍԿ (GSK) ընկերությանը և/կամ ՀՀ ԱՆ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ հետևյալ հղումով. www.pharm.am կամ զանգահարել թեժ գիծ՝ հետևյալ հեռախոսահամարներով. (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05:

Ընկերության տվյալներ

ԳՍԿ (GSK) կազմակերպության դեղերի օգտագործման հետ կապված անվտանգության վերաբերյալ տեղեկությունը պետք է ուղարկել հետևյալ էլեկտրոնային փոստով՝ ru.safety@gsk.com

Գրականության ցանկ

1. Given J, Taveras H, Iverson H, et al. Prospective, open-label assessment of albuterol sulfate hydrofluoroalkane metered-dose inhaler with new integrated dose counter. Allergy Asthma Proc. 2013; 34: 42–51. doi: 10.2500/aap.2012.33.3647. (available on request).
2. Kaur I, Aggarwal B, Gogtay J. Integration of dose counters in pressurized metered-dose inhalers for patients with asthma and chronic obstructive pulmonary disease: Review of evidence. Expert Opin Drug Deliv. 2015; 12 (8): 1301-10.
3. National Child Mortality Database (NCMD). National Child Mortality Database Programme Thematic Report. Child deaths due to Asthma or Anaphylaxis. Data from April 2019 to March 2023. December 2024.